

## ԱՐՑԱՆՆ ՈՒ ԶԱՆԳԵԶՈՒՐ ԵՎԱՃԵԼՈՒ ԱՆԳՈՒՎՐԻԲԵԶԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1919 Թ. ԳԱՐՆԱՆԸ

### Ա. Գ. ՍԻՍՈՆՅԱՆ

1918 թ. օգոստոսի սկզբներին զորավար Անդրանիկը ստանձնեց Զանգեզուրի ինքնապաշտպանությունը և ամբողջ 8 ամիս իր Հարվածող զորամասով ու տեղի զինված ջոկատների հետ ծանր կռիվներ մղելով տաճիկ - ադրբեջանական զորքերի դեմ՝ անտիկ պահեց գավառի սահմանները:

Ադրբեջանի թուրքերը կարծում էին, թե Անդրանիկի հեռանալուց հետո Զանգեզուրն այլևս չի կարող դիմադրություն ցույց տալ իրենց զանգվածային ճնշմանը: Բայց գավառը պատրաստ էր դիմագրավելու Նախիջևանից և Արցախից եկող բոլոր վտանգներին: Դա, իհարկե, նախատեսված չէր Անդրկովկասից օսմանյան բանակների հեռանալուց հետո Ադրբեջան մտած և նրան իր հովանավորության տակ առած անգլիական օկուպացիոն զորքերի հրամանատարության պլանների մեջ:

Թիֆլիսից շատ կարճ ժամանակով գալով Երևան՝ Ադրբեջանում բրիտանական զորքերի հրամանատար գեմ. Թոմսոնը 1919 թ. մարտի 28-ին միմիստր - նախագահ Ալեքսանդր Խատիսյանի հետ հանդիպման ժամանակ հայտնում է իր դրժգոհությունը, որ հայոց կառավարությունը, հակառակ դաշնակիցների ցանկության, եռանդուն գործունեություն է ծավալել Զանգեզուրն ու Արցախը ներառելու Հայաստանի Հանրապետության կազմի մեջ: Խատիսյանը և զրույցի մասնակիցներ Վերմիշևն ու Տիգրանյանն իրենց հերթին բողոքում են հայկական զույգ երկրամասերի նկատմամբ անգլիացիների՝ Ադրբեջանի ազդեցիկ քաղաքականությունը բացահայտորեն պաշտպանելու դեմ: Թոմսոնը Թիֆլիս է վերադառնում ձեռնունայն<sup>1</sup>:

Բայց անգլիացիները համառորեն շարունակում էին անտեսել ՀՀ կառավարության կարծիքը և Արցախի ու Զանգեզուրի հայության կամքը:

Բաքվի անգլիական զորքերի հրամանատար գեմ. Թոմսոնին փոխարինած գեմ. Օստելվորտը ապրիլի 3-ին այնտեղ հրապարակեց մի հայտարարություն, որտեղ մասնավորապես ասված էր, որ ինչպես Ղարաբաղի, այնպես էլ Զանգեզուրի հայերը պարտավոր են անառարկելիորեն կատարել անգլիական հրամանատարության համաձայնությամբ Բաքվի կառավարության կողմից Ղարաբաղ-Զանգեզուրի ընդհանուր գեներալ-նահանգապետ նշանակված Խոսրով բեկ Սուլթանովի «բոլոր հրամաններն ու կարգադրությունները», որ անգլիական հրամանատարությունը նահանգապետի «ձեռք առած բոլոր օրինական գործողություններին» ցույց է տալու ամեն կարգի աջակցություն<sup>2</sup>:

1919 թ. ապրիլի սկզբներին, Զանգեզուրի ազգային խորհրդի վերընտրությունից հետո, նախկին խորհուրդը ներկայացրեց իր հրաժարականը, Հայաստանի կառավարությունը, ընդառաջ գնալով Զանգեզուրի ու Արցախի ժողովրդի միահամուռ փափագին, որոշեց ՀՀ Զանգեզուրի նորընտիր Ազգային

<sup>1</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 231, թ. 51, ֆ. 276, ց. 1, գ. 101, թթ. 14-15, գ. 131, թթ. 1-2, նաև՝ Գ. Գալոյան, Հայաստանը և Մեծ տերությունները 1917-1923 թթ., Եր., 1999, էջ 67:

<sup>2</sup> Տե՛ս Գ. Լազեան, Հայաստան և հայ դատը ըստ դաշնագիրերու, տպ. «Յուսաբեր», Գաֆիթե, 1942, էջ 135:

խորհուրդը վերանվանել Զանգեզուր-Ղարաբաղի միացյալ շրջանային (մարզային) խորհուրդ և նրա կազմը համալրել Արցախի ներկայացուցիչներով: Այդ ձևով պաշտոնապես նվիրագործվեց Ղարաբաղ-Զանգեզուրի միությունը և երկուսի կցումը մայր Հայաստանին: Զանգեզուր-Արցախի ընդհանուր պետական կոմիտեի նշանակվեց շտաբ կապիտան Արսեն Շահմազյանը, որի պարտականությունների մեջ մտցվեց նաև շրջանային խորհրդի գործունեությանն աջակցելու և ուղղություն տալու գործը: Ինչ վերաբերում էր Արցախի ազգային խորհրդին, ապա այն շարունակելու էր գործել, բայց սահմանափակ իրավունքներով<sup>3</sup>:

Զանգեզուր – Ղարաբաղի միացյալ շրջանային նորընտիր խորհրդի կազմում ընդգրկված էր 11 հոգի (Գորիսի շրջանից՝ 3, Սիսիանից՝ 2, Ղափանից՝ 1, Արցախից՝ 5): Նորաստեղծ խորհրդի նախագահ ընտրվեց Մուշեղ Զաքարյանը (Սիսիանի շրջանից), փոխնախագահ՝ Արշակ Շիրինյանը (Գորիսի շրջանից), քարտուղար՝ Մելիքսեթ Եսայանը (Արցախից): Խորհրդի անդամներ ընտրվեցին Երեմիա Բակունցը և Սահակ Տեր-Հայրապետյանը՝ Գորիսի շրջանից, Սմբատ Մելիք-Ստեփանյանը՝ Ղափանի շրջանից, Խաչատուր Դանիելյանը, Գերասիմ Բալայանը, Եղիշե Իշխանյանը և Ասատուր Ավետիսյանը՝ Արցախից<sup>4</sup>:

Ի պատասխան այդ ակտի՝ Շատելվորտը հաջվում հրապարակեց հետևյալ հայտարարությունը. «Անգլիական հրամանատարությունը հայտարարում է ի գործադրություն Շուշի, Զանգեզուր, Ջիբրայիլ և Ջիվանջիր գավառների բովանդակ ազգաբնակչության, որ՝ 1) Ազրբեջանի կառավարության 1919 թ. հունվար 15-ի որոշումով Սուլթանովը նշանակված է Շուշի, Զանգեզուր, Ջիբրայիլ և Ջիվանջիր գավառների ընդհանուր նահանգապետ և վայելում է անգլիական հրամանատարության աջակցությունը: 2) Գոյություն ունեցող օրենքի համաձայն, ամբողջ ազգաբնակչության կարիքների գոհացման համար ընդ. նահանգապետին կից կազմակերպվում է հայ-մահմեդական վեց իրազեկ ներկայացուցիչներից մի խորհուրդ: 3) Անգլիական հրամանատարության ներկայացուցիչ հանգամանքով կարող է խորհրդի մեջ մտնել անգլիական առաքելության սպաներից մեկը: 4) Ընդ. նահանգապետության սահմաններում ծառայող բոլոր պաշտոնյաների ուճիկը և մյուս ծախսերը հոգացվում են ադրբեջանյան գանձարանից: 5) Բոլոր վիճելի հարցերն իրենց վերջնական լուծումը կստանան [Փարիզի] Հաշտության վեհաժողովում: 6) Ընդ. նահանգապետության սահմաններում կատարվող բոլոր զինվորական տեղափոխությունների մասին նախօրոք տեղեկացվում է անգլիական առաքելությանը: 7) Սույն հաղորդագրությամբ անգլիական հրամանատարությունը ուզում է մատնանշել, որ ընդ. նահանգապետի վրա դրված պարտականությունների գործադրությունը՝ ի մասին ընդ. նահանգապետության մեջ կարգի և անդորրության պահպանման, ընդ. նահանգապետից և նրա մարմիններից բխող բոլոր հրամաններն ու կարգադրությունները պետք է իրագործվեն առանց առարկության, և անգլիական հրամանատարությունը աջակցություն է ցույց տալիս ձեռք առնված օրինական միջոցներին»<sup>5</sup>:

<sup>3</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 243, թթ. 31-32, ֆ. 4033, ց. 5, գ. 449, թ. 1, ֆ. 4047, ց. 1, գ. 390, թ. 1 և շրջերես, Արտ. Բաբայան, Էջեր Հայաստանի անկախութեան պատմութենէն, «Հայրենիք» ամսագիր, 1923, հուլիս, թիվ 9, էջ 105:

<sup>4</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 38, գործավարական թիվ 268, ֆ. 206, ց. 1, գ. 27, թ. 28 և շրջերես, ֆ. 4047, ց. 1, գ. 390, թ. 1 և շրջերես, Ա. Աստուածատրեան, Ադրբեյջանը եւ Հայաստանը անկախութեան նախօրէին եւ անկախութեան օրերին, «Հայրենիք» ամսագիր, 1957, հոկտեմբեր, թիվ 10(380), էջ 48, Բ. Ուլուբաբյան, Արցախյան գոյապայքարը, Եր., 1994, էջ 57:

<sup>5</sup> ՀԱԱ, ֆ. 4047, ց. 1, գ. 389, թ. 2:

Այս հայտարարությունը հանդիպեց Հայաստանի կառավարության, զանգե-  
զուրցիների և արցախցիների կազմակերպված դիմադրությանը. նախ՝ Ջանգե-  
զուր-Ղարաբաղի շրջանային խորհուրդը ապրիլի 7-ին Գորիս քաղաքում, Ղա-  
փանի հանքերում, գավառի բազմաթիվ գյուղերում կազմակերպեց բողոքի  
հանրահավաքներ ու ժողովներ՝ ուղղված Ջանգեզուրին ուժով տիրանալու Բաք-  
վի ոսնձգությունների դեմ: Միաժամանակ սկսվեց զինված նոր ջոկատների կազ-  
մակերպումը:

Իր հերթին Ադրբեջանը անզլիացիների հովանավորությամբ աստիճանա-  
բար սեղմում էր օղակը Ղարաբաղի և Ջանգեզուրի շուրջը՝ մեծաթիվ զորքեր  
կենտրոնացնելով ռազմավարական կարևոր կետերում՝ Ասկերանում, Խանքեն-  
դում, Օուշիում, Ջաբուղում, Կարյազհնդում, իսկ Նախիջևանի կողմից՝ Դարալա-  
գյազի ուղղությամբ: Մուսավաթական զորքերին միացել էին Ադրբեջանում և  
Նախիջևանում մնացած տաճկական ջոկատները: Այդ կապակցությամբ Արցա-  
խի ինքնապաշտպանության նշանավոր կազմակերպիչներից Հարություն Թու-  
մյանը գրել է. «Նույն անզլիացիների գիտությամբ ադրբեջանական բանակը կազ-  
մակերպելու գործում մեծ դեր էր խաղում այստեղ թաքնված հայակեր էնկվեր փա-  
շան: Փաստորեն հայտարարված էր Ղարաբաղի տնտեսական շրջափակում,  
անհնար էր գյուղատնտեսական աշխատանքներով զբաղվելը: Սույթանովի կազ-  
մակերպած ավազակախմբերը հսկում էին Օուշի մտնող ճանապարհները: Օու-  
շիում անզլիացիները ուժեղացրել էին մուսուլման հնդիկներից կազմված զորա-  
մասը»<sup>6</sup>:

Միաժամանակ Օստելվորտը Բաքվում վճռականորեն հայտարարել էր, թե  
1919 թ. փետրվարի 12-ից 21-ը Օուշիում տեղի ունեցած Արցախի հայության *չոր-  
րորդ համագումարում* ընտրված Ազգային խորհրդի հետ անզլիական միսիան  
այլևս ոչ մի հարաբերություն չի ունենալու, հետևապես այն պետք է ցրվի<sup>7</sup>:

Չնայած բոլոր սպառնալիքներին՝ Արցախի Հայոց ազգային խորհուրդը շա-  
րունակում էր գործել գաղտնի և ուղղություն տալ արցախահայության պայքա-  
րին՝ առայժմ ստանալով միայն Հայաստանի հանրապետության կառավարու-  
թյան, Ջանգեզուրի ու Արցախի պետական կոմիսարի և Ջանգեզուր-Ղարաբաղի  
շրջանային խորհրդի բարոյական աջակցությունը<sup>8</sup>:

Ապրիլի 19 (21)-ին մեծ շքախմբով Բաքվից Օուշի ժամանեց գեն. Օստելվոր-  
տը՝ մասնակցելու ապրիլի 23-ին Օուշիում սկսվող Արցախի հայության *հինգե-  
րորդ համագումարի* աշխատանքներին և տեղում կոնկրետ լուծում տալու արցա-  
խահայերին մուսավաթական Ադրբեջանին ենթարկելու հարցին<sup>9</sup>: Օստելվորտը  
Արցախի հայոց ազգային խորհրդից պահանջեց հնարավորինս շուտ դրական պա-  
տասխան տալ իրեն հետաքրքրող հարցին, այն է՝ երբ պետք է համաձայնություն

<sup>6</sup> «Խորհրդային Ղարաբաղ», 1989, 10 նոյեմբերի:

<sup>7</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 243, թթ. 32, 57, գ. 309, թթ. 123, 130, ֆ. 201, ց. 1, գ. 42, թ. 17, «Ժողովրդի ձայն» Թիֆլիս, 1919, թիվ 59, 20 մարտի, Գ. Գալոյան, նշվ. աշխ., էջ 67:

<sup>8</sup> Տե՛ս «Արտաքին գործերի մինիստրի գեկուցումը Հայաստանի կառավարության  
կովկասեան կոնֆերանսի գործունեության մասին, 12 լուճիս, 1919», «Հայրենիք» եռամ-  
սեալ, 1968, Ա տարի, թիվ 2, էջ 21:

<sup>9</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 309, թ. 36 և շրջերես, ֆ. 4047, ց. 1, գ. 441, թ. 1, Ս. Մելիք-  
Եօլչեան, Բագուի հերոսամարտը, «Հայրենիք» ամսագիր, 1925, հոկտեմբեր, թիվ 12(36),  
էջ 124, Սարրուր (Քիրս Սարրոս), Ղարաբաղի կցումը Ատրբեջանի, «Հայրենիք» ամսագիր,  
1929, հունիս, թիվ 8(80), էջ 136, Ա. Աստուածատրեան, նշված հոդվածը, «Հայրենիք» ամ-  
սագիր, 1957, սեպտեմբեր, թիվ 9, էջ 51, Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն,  
Եր., 1993, էջ 333, Ե. Իշխանեան, Լեռնային Ղարաբաղ, 1917-1920, Եր., 1999, էջ 393, Բ.  
Ուլուբաբյան, նշվ. աշխ., էջ 53, Հ. Արրահամյան, Մարտնչող Արցախը 1917-2000, գիրք  
Ա, 1917-1923, Եր., 2003, էջ 128-129:

ստանա Արցախի ու Ջանգեզուրի 300.000-ի հասնող հայությանը դնելու մուսավաթական կառավարության լծի տակ<sup>10</sup>:

Համագումարի նիստերից մեկին մասնակցեցին Օստելվորտը և Սուլթանովը: Իր ելույթում գեներալը մասնավորապես արցախահայերին սպառնաց Արցախը ենթարկել տնտեսական շրջափակման<sup>11</sup>: Վերջում անգլիացին բրիտանական կառավարության անունից պահանջեց անվերապահորեն կատարել գեներալ-նահանգապետ Խոսրով բեկ Սուլթանովի բոլոր կարգադրությունները<sup>12</sup>:

Օստելվորտի սանձարձակ ելույթը բողոքի փոթորիկ առաջ բերեց համագումարում: Պատգամավորներն իրենց ելույթներում մերժեցին ներկայացված պահանջները՝ անընդունելի համարելով Ադրբեջանի հետ միավորվելու որևէ վարչական ձև<sup>13</sup>:

Գեներալի ելույթի առիթով համագումարի պատգամավորների ընդունած հայտարարության մեջ, որտեղ ասվում էր, որ Ադրբեջանի թուրքերը միշտ ունեցել են տաճկական կողմնորոշում և ամեն կերպ նպաստել են տաճկական զորքերի Անդրկովկաս մտնելուն: Այժմ նույնպես Ադրբեջանը կողմնորոշված է դեպի Տաճկաստան, թեև ադրբեջանական թուրքերը փորձում են դա ժխտել: Բոլորին է հայտնի, նշված էր հայտարարության մեջ, որ ավազակությունները, թալանը, մարդասպանությունները, ճանապարհներին հայերին առևանգելը Ադրբեջանի նպատակների իրականացման սովորական միջոցներ են: Համագումարը գտնում էր, որ «Ղարաբաղի հայության քաղաքական, պատմական, կուլտուրական, իրավական և մանավանդ տնտեսական պայմանները չեն կարող ոչ մի դեպքում հիմք ծառայել հայ ժողովրդի վզին փաթաթելու Ադրբեջանի թեկուզ ժամանակավոր իշխանության վարչական ձևը<sup>14</sup>:

Համագումարի պատվիրակները միահամուռ մերժեցին անգլիացի գեներալի պահանջները: Երկրորդ անգամ լսելով Ադրբեջանի իշխանությանը ենթարկվելու մասին Օստելվորտի պահանջը՝ համագումարը կրկին շեշտեց, որ ինքը «միանգամայն անհնարին է գտնում փոխելու իր ժխտական որոշումը, որը թելադրված է Ղարաբաղի ամբողջ հայության անհողորդը կամքով, որին դավաճանելը ոչ մի դեպքում չեն ուզում և չեն կարող»<sup>15</sup>:

Համագումարի վճռական կեցվածքին հետևում է Օստելվորտի նույնքան վճռական հայտարարությունն այն մասին, որ ինքը օրենքից դուրս է համարում Արցախի հայության 4-րդ համագումարում ընտրված Ղարաբաղի ազգային խորհուրդը, հիշեցնում, որ Բաքվի բրիտանական հրամանատարությունը հենց սկզբից չի ճանաչել այդ խորհրդի լիազորությունները, իսկ առավել ևս այժմ նրա գոյությունը անհանդուրժելի է համարում:

<sup>10</sup> Տե՛ս Ս. Մելիք-Եօլչեան, *Ազվ. աշխ.*, էջ 124, Սարուր (*Քիրս Սարուր*), *Ազվ. աշխ.*, էջ 136, Ա. Աստուածատրեան, *Ազված հողվածը*, «Հայրենիք» ամսագիր, 1957, սեպտեմբեր, թիվ 9, էջ 52, Ս. Վրացյան, *Ազվ. աշխ.*, էջ 331-332, Ե. Իշխանեան, *Ազվ. աշխ.*, էջ 395, Գ. Գալոյան, *Ազվ. աշխ.*, էջ 68, Հ. Աբրահամյան, *Ազվ. աշխ.*, էջ 130:

<sup>11</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 218, թ. 1:

<sup>12</sup> Տե՛ս ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի արխիվ, Լեոյի ֆոնդ, Միսակ Տեր-Ռաֆիելյանի հուշեր:

<sup>13</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 38, թ. 27, Ե. Իշխանեան, *Ազվ. աշխ.*, էջ 393, Սարուր (*Քիրս Սարուր*), *Ազված հողվածը*, էջ 136, Ա. Աստուածատրեան, *Ազված հողվածը*, «Հայրենիք» ամսագիր, 1957, սեպտեմբեր, թիվ 9, էջ 52, «Արտաքին գործերի մինիստրի գեկուցումը ...», էջ 21, Բ. Ուլուրաբյան, *Ազվ. աշխ.*, էջ 54, Հ. Աբրահամյան, *Ազվ. աշխ.*, էջ 130-132:

<sup>14</sup> Տե՛ս Ս. Վրացյան, *Ազվ. աշխ.*, էջ 333, Ե. Իշխանեան, *Ազվ. աշխ.*, էջ 403, Հ. Աբրահամյան, *Ազվ. աշխ.*, էջ 132: Այդ հայտարարությունից հետո Օստելվորտը մեկնում է Օուշից:

<sup>15</sup> ՀԱԱ, ֆ. 4047, ց. 1, գ. 390, թ. 4:

Արցախի հայության 5-րդ համագումարից հետո անգլիացիները խարդավանքներով ու բացահայտ բռնություններով առժամանակ կարողանում են կասեցնել Ազգային խորհրդի ակտիվ գործունեությունը: Նրանք նախ Արցախից արտրեցին հայտնի գործիչներից ոմանց, այդ թվում՝ Ազգային խորհրդի անդամներից մի քանիսին, իսկ ոմանց էլ ստիպեցին քաղաքական գործունեությամբ այլևս չզբաղվելու ստորագրություն տալ<sup>16</sup>:

Աքսորներով ու ձերբակալություններով անգլիացիներին ու թուրքերին ի վերջո հաջողվեց դադարեցնել Ազգային խորհրդի գործունեությունը Շուշիում<sup>17</sup>: Բայց դա չկտրեց արցախահայության դիմադրական ուժը: Ժողովուրդը մերժեց անգլիական իշխանության հայադավ պահանջները: Վարանդայում կազմակերպվում է ինքնապաշտպանական մի մարմին, որը փոխարինում է Ազգային խորհրդին: Այդ մարմնի մեջ են մտնում խորհրդի դեռևս Արցախում գտնվող անդամները, զինվորական ու պետական հայտնի գործիչներ<sup>18</sup>: Այդպիսով, փաստորեն, Ազգային խորհուրդը շարունակում էր գործել: Ամեն ինչից երևում էր, որ Անդրկովկասի բրիտանական հրամանատարությունը ամուր բռնել է Արցախի ու Զանգեզուրի կոկորդից և չի ցանկանում բաց թողնել: Անգլիացիների օգնությամբ Արցախին տիրանալու համար մուսավաթականները պատրաստ էին ամեն տեսակի բռնությունների, նույնիսկ արյունահեղության: Անհանգստացնող էր հատկապես այն, որ մեղմանալու փոխարեն օրըստօրե ավելի էր սրվում ու բարդանում իրավիճակը, որից դուրս գալու երեք ուղի կար. 1. Ենթարկվել Ադրբեջանի կառավարությանը, 2. կրկին ու կրկին խնդրել Հայաստանի կառավարությանը, որպեսզի նա իր ձեռքը վերցնի Արցախի դատը և դիվանագիտական կամ մեկ այլ ճանապարհով լուծի այդ ծանր խնդիրը, 3. դիմել զինված լայնածավալ պայքարի:

Առաջին տարբերակը արցախահայությունը վճռականապես մերժում էր, երկրորդ դեպքում՝ հազիվ թե մոտ ապագայում Երևանից օգնություն հասներ, թեև Արցախի հայերը չէին կորցնում իրենց հույսը: Ինչ վերաբերում էր Ադրբեջանի հետ վճռական կռիվի մեջ մտնելուն, ապա պահը խիստ անհարմար էր, քանի որ, ինչպես տեսանք, նրան բացահայտորեն աջակցում էր Անգլիան՝ Անդրկովկասում գտնվող իր զորքերով:

Արցախում տեղի ունեցող վտանգավոր գործընթացները տազնապ էին առաջացնում նաև Զանգեզուրում: Բայց այդ դժվարին օրերին հուսադրիչ լուրեր էին գալիս գավառի հարավարևմտյան կողմերից:

Բանն այն է, որ Հայաստանի արտգործնախարար Սիրական Տիգրանյանը և Նախիջևանի գավառի բրիտանական զինվորական կառավարիչ փոխգնդապետ Ֆ. Ե. Լաուրթնը դեռևս 1919 թ. փետրվարի 3-ին կնքել էին մի համաձայնություն, որով 1) Նախիջևանի գավառը հանձնվում էր հայկական կառավարմանը (Ուվաչայից մինչև նախկին Երևանյան գավառի հարավային սահմանը), սակայն երկրամասը անորոշ ժամանակով ենթակա էր լինելու բրիտանական վերահսկողությանը, 2) Նախիջևանի յուրաքանչյուր գյուղ ինքն էր ընտրելու իր տանուտերին, 3) նշված տարածքում կարգն ու կանոնը պաշտպանելու էին ոչ թե հայկական, այլ բրիտանական զորախմբերը և այդ նպատակով բրիտանական մի զորամաս տեղաբաշխվելու էր Դավալու գյուղում, իսկ հայերն իրենց բոլոր զորախմբերը, բացառությամբ Դավալուի զորամասից, հետ պիտի քաշեին Ուվաչայից հյուսիս, 4) առանց բրիտանական ներկայացուցչի հրամանի հայկական զորամասերն

<sup>16</sup> Տե՛ս Արտ. Բաբալեան, նշվ. աշխ., էջ 104, Ե. Իշխանեան, Դեպքերը Ղարաբաղում, Մշոմներ և դիտողություններ, «Հայրենիք» ամսագիր, 1933, հոկտեմբեր, թիվ 12(132), էջ 124, Ս. Վրացյան, նշվ. աշխ., էջ 334:

<sup>17</sup> Տե՛ս Ս. Մելիք-Եօլչեան, նշվ. աշխ., էջ 124, Արտ. Բաբալեան, նշվ. աշխ., էջ 104, «Արտաքին գործերի մինիստրի զեկուցումը ...», էջ 21:

<sup>18</sup> Տե՛ս Արտ. Բաբալեան, նշվ. աշխ., էջ 104:

առժամանակ չպետք է մտնեին թուրքաբնակ գյուղերը, 5) Երևանի կառավարությունը պարտավորվում էր վերահաստատել հեռագրական հաղորդակցությունը սահմանի և Երևան քաղաքի միջև<sup>19</sup>:

Ինչպես տեսնում ենք, այս համաձայնագիրն անգլիացիների կողմից առաջին գործնական քայլն էր Նախիջևանի խնդիրը կարգավորելու, երկրամասը իր իսկական տիրոջը վերադարձնելու ուղղությամբ:

Չանգեզուրցիները մեծ շահագրգռվածությամբ էին հետևում Նախիջևանում դեպքերի հետագա զարգացմանը, քանի որ գործընթացի հաջող ելքից էր կախված լեռնաշխարհում ապաստանած նախիջևանահայ բազմահազար գաղթականությունը վերադարձը հայրենի օջախներ, որով միայն կթեթևանար զանգեզուրցու ծանր բեռը:

Ծառ չանցած՝ Նախիջևանը լիովին անցավ Հայաստանի Հանրապետությանը, և նախիջևանահայ գաղթականները սկսեցին վերադառնալ իրենց բնակավայրերը, այդ թվում՝ Ջուլֆա և Ջուղա<sup>20</sup>:

Չանգեզուրում ուրախությամբ ընդունեցին Նախիջևան-Ծարուրի տարածքում անհապաղ պետական մարմիններ ստեղծելու մասին ՀՀ նախարարների խորհրդի ապրիլի 26-ի որոշումը<sup>21</sup>:

Ապրիլի 29-ին ՀՀ Նախարարների խորհուրդը քննարկում է այդ շրջաններում վարչական միավորներ կազմակերպելու հարցը և որոշում ստեղծել 3 գավառ. ա) Գողթան՝ Ագուլիս կենտրոնով, բ) Նախիջևան՝ Նախիջևան կենտրոնով, գ) Ծարուր՝ Բաշ-Նորաշեն կենտրոնով<sup>22</sup>:

Հայաստանի կառավարության բազմաթիվ բողոքներից հետո անգլիական հրամանատարությունը համաձայնել էր, որ Հայաստանի պետությունը Արցախում ունենա հանրապետության զինվորական ներկայացուցիչ, բայց միայն այն պայմանով, որ նա գործի Օուշիի անգլիական միսիային կից և զբաղվի միայն սովյալ բնակչության վիճակը բարելավելու հարցերով: Ըստ այդմ՝ ՀՀ կառավարությունն Արցախում իր զինվորական ներկայացուցիչ նշանակեց կապիտան Միշա Արզումանյանին<sup>23</sup>: Ընդհատ է, խոսքով բեկ Սուլթանովի բողոքի հիման վրա Ադրբեջանի կառավարությունը անգլիական հրամանատարությանը խնդրել էր այդ պաշտոնում նշանակել մեկ ուրիշ հայ գործչի, բայց ապրիլի 28-ին Միշա Արզումանյանը, հասնելով Օուշի, նրանց կանգնեցրել էր փաստի առաջ:

Հայաստանի զինվորական ներկայացուցիչը Արցախ եկավ այն ժամանակ, երբ դրությունը օրըստօրե ծանրանում էր, որովհետև հայկական գյուղերի վրա թուրքերի հարձակումներն ու ալան-թալանն անցել էին չափ ու սահման: Թեև պաշտոնապես լուծարված, բայց նախկինի պես ակտիվորեն գործող Ազգային խորհրդի և նրա նախագահ Եղիշե Իշխանյանի մոտ կուտակվել էին գյուղերից ստացված հարյուրավոր բողոքագրեր ու զանգատներ:

Քանի որ Արցախի ազգային խորհուրդը զրկված էր անգլիական միսիայի հետ անմիջական կապի մեջ մտնելու իրավունքից, ուստի առավել կարևոր դիմումները ստիպված եղավ շտապ փոխանցել Միշա Արզումանյանին՝ միսիային ներկայացնելու համար:

<sup>19</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 4047, ց. 1, գ. 391, թթ. 1-4:

<sup>20</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 209, թ. 37 ա, գ. 243, թ. 99, ֆ. 4047, ց. 1, գ. 391, թ. 1, Արտ. Բաբայեան, նշվ. աշխ., էջ 109, Ա. Աստուածատրեան, նշված հոդվածը, «Հայրենիք» ամսագիր, 1957, հոկտեմբեր, թիվ 10(380), էջ 51, Գ. Գալոյան, նշվ. աշխ., էջ 77:

<sup>21</sup> Տե՛ս «Կառավարական լրաբեր», 1919, 12 մայիսի:

<sup>22</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 119, ց. 1, գ. 14 (մաս առաջին), թ. 77:

<sup>23</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 42, թթ. 9, 10, Սարուր (Քիրս Սարոտ), Ղարաբաղի կցույնը Ատրբեջանի, էջ 135, Ե. Իշխանեան, նշվ. աշխ., էջ 404, Լ. Արբաթյան, նշվ. աշխ., էջ 124:

Սովորաբար, երբ միսիայի անդամները Արցախի հայերից զանգատներ ու բողոքներ էին ստանում, որպես կանոն, դրանց չէին պատասխանում, իսկ հազվադեպ տրված պատասխանը լինում էր միայն «բարի խորհուրդ»՝ դիմել ոչ թե իրենց, այլ գեներալ-նահանգապետ Խոսրով բեկ Սուլթանովին: Միշտ Արզումանյանի կողմից միսիա ներկայացրած բողոքներն այս անգամ էլ արժանացան նույն ծաղրական պատասխանին<sup>24</sup>:

Անգլիացիների բացահայտ հակահայկական դիրքը Սուլթանովին դարձրել էին ավելի լկտի ու անգիջում: Ջանգեզուրին սահմանակից վայրերում և Արցախի կարևոր կետերում կուտակված զինական ուժերը համարելով բավարար՝ Սուլթանովը որոշեց դիմել վճռական գործողությունների՝ զենքով հայկական զույգ երկրամասը նվաճելու համար:

Ապրիլի 30-ին Ադրբեջանի թուրքերը մեծ ուժերով հարձակվեցին Դիզակի Դուլանլար հայկական գյուղի վրա: Օրենքից դուրս հայտարարված Արցախի Ազգային խորհուրդը զինվորական շտաբին կարգադրեց անպայման օգնության հասնել Դիզակի շրջանի հրամանատար Արտեմ Լալայանին և ամեն գնով պաշտպանել Դուլանլարը: Երկու օր տևած համառ կռիվներից հետո թուրքերի հարձակումը հետ մղվեց նրանց համար զգալի կորուստներով<sup>25</sup>:

Թուրքական մի այլ բազմամարդ գործառնույն նույն օրը հարձակում գործեց Գորիսի շրջանի Գերենգուր (Կոռնիձոր) գյուղի ուղղությամբ, բայց, հանդիպելով զանգեզուրյան ուժերի կործանիչ դիմադրությանը, մեծ թվով դիակներ թողնելով, փախավ կովի դաշտից:

Մուսավաթական մեկ ուրիշ գործառնույն հարձակման անցավ Ղափանի շրջանի Ուժանիս, Մոդես, Հազարակ գյուղերի վրա, բայց տեղի հայկական ջոկատները շնորհից հարված տվեցին թշնամուն և դուրս շարտեցին գյուղի տարածքներից: Ավելին, խորանալով հակառակորդի դասավորության մեջ՝ կարողացան նրան ջախջախել իր իսկ տարածքում և վերադառնալ ռազմական ավարով<sup>26</sup>:

Համոզվելով, որ Ջանգեզուրի սահմաններն անտիկ են, Ադրբեջանի կառավարությունը փոխեց գործելաձևը. սկսեց սպառնալից բողոքագրեր ուղարկել Երևանի կառավարությանը: Սակայն ոչ մուսավաթական կառավարության և ոչ էլ Խոսրով բեկ Սուլթանովի սպառնալիքները որևէ նշանակություն չունեցան, քանզի առաջվա պես զանգեզուրցիներն ամուր կանգնած էին հարազատ լեռնավայրի պաշտպանության դիրքերում:

Անգլիական միսիայի ղեկավար Մոնկ Մեյսնի կարգադրությամբ միսիայի ներկայացուցիչը Միշտ Արզումանյանի ուղեկցությամբ 1919 թ. մայիսի 1-ին Օուշից ավտոմեքենայով մեկնեց Գորիս՝ Օրջանային խորհրդի հետ բանակցելու<sup>27</sup>:

Գալով Գորիս՝ մայիսի 2-ին անգլիացին իր մոտ է հրավիրում Օրջանային խորհրդի անդամներին և անում բազմիցս կրկնված մի քանի հայտարարություն, իսկ ապա ներկայացնում երկու գլխավոր պահանջ. 1) Ջանգեզուրում կարգ և իշխանություն հաստատելու, ճանապարհները բանալու և ժողովրդին պարեն հասցնելու համար ճանաչել Ադրբեջանի իշխանությունը: Ըստ որում՝ այդ ճանաչումը պետք է կատարվեր պաշտոնապես, գրավոր՝ չսպասելով Փարիզի խաղաղության կոնֆերանսի որոշմանը՝ նկատի առնելով, որ կոնֆերանսը, միևնույն է,

<sup>24</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 309, թ. 123, Արտաքին գործերի միմիստրի գեկուցումը Հայաստանի կառավարութեան ... էջ 22:

<sup>25</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 309, թթ. 123:

<sup>26</sup> Տե՛ս Ստեմել, Ջանգեզուրի հերոսամարտը եւ Արսէմ Ծախմազեան, «Հայրենիք» ամսագիր, 1963, փետրվար, թիվ 2, էջ 30-31:

<sup>27</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 42, թ. 17, Բ. Ուլուբաբյան, նշվ. աշխ., էջ 61: Աղբյուրների մի մասում նշված է, թե Մ. Արզումանյանի ուղեկցությամբ Գորիս է մեկնել Օուշիում անգլիական միսիայի ղեկավար Մոնկ Մեյսնը:

հարցն անպայման վճռելու է Ադրբեջանի օգտին, 2) հնարավորություն ստեղծել, որպեսզի Ադրբեջանից եկող քոչվորներն անարգել բարձրանան Ջանգեզուրի սարերը<sup>28</sup>։

Օրջանային խորհրդի անդամները անգլիացուն տվեցին բանավոր մի շարք բացատրություններ, որոնցից կարևորներն էին՝ ա) Ջանգեզուրում կարգ և իշխանություն հաստատելու անգլիացիների պահանջն ավելորդ է, քանի որ «ոչ միայն այժմ, այլև համատարած իշխանության օրերին»<sup>29</sup> Ջանգեզուրում միշտ թագավորել է օրինակելի իշխանություն, և այժմ հարկ չկա իշխանություն հաստատել այնտեղ, ուր անիշխանություն չկա», բ) «Ուղիղ երկու տարի է, ինչ Ջանգեզուրը կտրրված է կուլտուրական աշխարհից, նրա առաջ փակված են հաղորդակցության ճանապարհները։ Ջանգեզուրը հաշտվել է այդ հանգամանքի հետ, գտնելով, որ իր ազատությունը վեր է ամեն տեսակի հարմարություններից և կուլտուրական բարիքներից։ Համաշխարհային խաղաղարար կոնֆերանսի հայտարարությունը պարզորոշ թելադրում է ամենքին՝ պահպանելու եղած դրությունը, մինչև վերջնական որոշման հայտարարելը», գ) «Թուրք-ադրբեջանական ավանտյուրայի ամբողջ ընթացքում Ջանգեզուրը միշտ եղել է ինքնուրույն և դաշնակից հրամանատարությունը այդպես էլ տեսել է Ջանգեզուր մտնելիս», դ) «Ամեն մի ուսնձգություն մեր ինքնուրույնության դեմ, ում կողմից էլ որ երևան գա այն, «ստատուքվոյի» խախտում է և մեր կողմից կհանդիպի ամենաուժեղ դիմադրության», ե) «Ռոչը բաց թողնել նշանակում է Ջանգեզուրի թիկունքն անցկացնել զինված թշնամի տարր, որը հարմար թույլ է կարող է մեծապես վտանգել գավառը։ «Ոչ քոչը բաց կթողնենք և ոչ էլ լսել անգամ կուզենք Ադրբեջանի մասին», - անգլիացուն ասում էին խորհրդի անդամները՝ համատորեն պնդելով, որ Ջանգեզուրը Հայաստանին է պատկանում և իրենց հրահանգներ կարող է տալ միայն Երևանը<sup>30</sup>։

Քաջարի զանգեզուրցիների վճռական հայտարարությունը վերջանում էր այսպիսի սպառնական տոնով. մեր ինքնավարության դեմ որևէ ուսնձգություն պիտի հանդիպի մեր հարատև դիմադրությանը և հակահարվածին։

Կտրականապես մերժելով ներկայացված պահանջները և հենվելով Ջանգեզուրի գյուղացիական համագումարի կամքի վրա՝ Օրջանային խորհրդի անդամները իրենց պատասխանը ձևակերպեցին զրավոր և պաշտոնապես ներկայացրին անգլիացուն։ Այն բաղկացած էր երկու կետից. «1. Ջանգեզուրի Առաջին գյուղացիական համագումարի որոշման համաձայն Հայաստանի հանրապետության երկրամաս Ջանգեզուրի դեմ կատարած ամեն մի ագրեսիվ գործողություն կհանդիպի ամենահամառ և կատաղի դիմադրության Ջանգեզուրի հայ ժողովրդի կողմից, 2. Այն քոչվորները, որոնք չեն ապրում Հայաստանի հանրապետության [Ջանգեզուր] երկրամասում, ոչ մի դեպքում և ոչ մի պայմանով չի թույլատրվում բարձրանալ սարերը»<sup>31</sup>։

Խորհրդակցությունից հետո անգլիացին բողոքագիր ներկայացրեց պետական կոմիսար Արսեն Ծահմազյանին՝ սպառնալով, որ «Ջանգեզուրի գավառը Ադրբեջանի կառավարությանը ենթարկելու դեմ որևէ արգելք հարուցելու դեպքում Դուք կրելու եք անձնական պատասխանատվություն Անգլիայի կառավարության առջև»<sup>32</sup>։ Ավելին, նա նույնիսկ հանդգնեց Ա. Ծահմազյանին առաջարկել հեռանալու Ջանգեզուրից։

<sup>28</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 33, ց. 8, գ. 100, թ. 2։

<sup>29</sup> Նկատի է առնված ցարական միապետության ժամանակները։

<sup>30</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 4033, ց. 8, գ. 100, թ. 2։

<sup>31</sup> Նույն տեղում, թ. 3։

<sup>32</sup> ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 309, թ. 25։



Այսուհանդերձ, անգլիացին Միշա Արզումանյանի հետ փաստորեն մայիսի 4-ին դատարկաձեռն վերադարձավ Օուշի<sup>33</sup>:

Արցախի ազգային խորհուրդը հավանություն է տալիս Ջանգեզուր-Ղարաբաղի շրջանային խորհրդի բռնած սկզբունքային ու վճռական դիրքին, բայց դժգոհում, որ Մ. Արզումանյանը Գորիսից իր հետ չէր բերել Երևանից Արցախի համար ուղարկած գումարը<sup>34</sup>, որը կարող էր ծածկել տեղի հայության հոգսերի գոնե չնչին մասը: Միհնդեռ Խոսրով բեկ Սուլթանովը Արցախ էր մտել 25 միլիոն ռուբլով, բացի այդ՝ Ադրբեջանի գանձարանում նրա համար բացված էր անսահմանափակ վարկ<sup>35</sup>:

Ջանգեզուրի մերժումը ստանալուց հետո Սուլթանովը, անգլիական միսիայի հետ խորհրդակցելով, որոշում է քոչը տեղափորել Արցախի սահմաններում<sup>36</sup>: Դա նշանակում էր, որ Արցախը ենթարկվելու էր ավերածության: Բարյուրհագարավոր անասունները մորեխի պես ոչնչացնելու էին արցախցիների արտերն ու արտավայրերը, իսկ զինված քոչվորները և նրանց միացած ավազակաբարո տարրերը շերտընդմեջ մտնելու էին հայության մեջ:

Արցախի և Ջանգեզուրի համար առաջիկայում սպառվում էին նոր փորձություններ:

**А. Г. СИМОНЯН - *Англо-азербайджанские действия по захвату Арцаха и Зангезура весной 1919 года.*** - Командующий английскими войсками в Азербайджане генерал Шателворт 3-го апреля 1919г. официально объявил о том, что армяне Арцаха и Зангезура должны безоговорочно подчиняться всем приказам и распоряжениям назначенного бакинским правительством генерал-губернатора Хосров бека Султанова, который пользовался полной поддержкой англичан. В ответ на это правительство Армянской Республики, идя навстречу пожеланиям армянского населения Арцаха и Зангезура, решило переименовать Национальный совет Зангезура в Объединенный Краевой совет Зангезур-Карабаха. Пользуясь полной поддержкой англичан, военные формирования Азербайджанской республики и разбойничьи банды Султанова начали постепенно сужать кольцо вокруг Арцаха и Зангезура.

Несмотря на целенаправленное преследование Армянского национального совета Арцаха со стороны англичан, Совет продолжал свою работу по организации борьбы армян Края против азербайджанского диктата. Пытаясь воздействовать на решительность армян Арцаха в борьбе за независимость против азербайджанских захватчиков, генерал Шателворт предложил созвать в Шуши 5-й съезд армян Арцаха, на котором попытался сломить волю арцахцев, настаивая на требовании подчиниться правительству Азербайджана. Откровенный шантаж и угрозы английского генерала породили бурю протеста со стороны арцахских армян. Делегаты съезда решительным образом высказались за отказ подчиниться правительству Азербайджана, на что англичане ответили объявлением вне закона Национального совета Карабаха. После отъезда генерала Шателворта из Шуши англичане прибегнули к арестам и ссылкам наиболее известных и активных деятелей армянского сопротивления в Карабахе. Однако это не сломило сопротивление арцахских армян.

<sup>33</sup> Տե՛ս Ստեմել, նշվ. աշխ., էջ 32-33, Լ. Արրահամյան, նշվ. աշխ. էջ 135:

<sup>34</sup> Մ. Արզումանյանը նաև Արցախի ազգային խորհրդից խնդրանք ուներ Օուշի տանել Հայաստանի կառավարության կողմից Արցախին հատկացված Գորիսում գտնվող 1.200.000 ռուբլի (տե՛ս ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 42, թ. 17, Բ. Ուլուրաբյան, նշվ. աշխ., էջ 61):

<sup>35</sup> Տե՛ս Բ. Ուլուրաբյան, նշվ. աշխ., էջ 61:

<sup>36</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 38, թ. 28, ֆ. 201, ց. 1, գ. 41, թ. 40, ֆ. 4047, ց. 1, գ. 441, թ. 2:

Многочисленные протесты правительства Армянской Республики вынудили английское командование дать согласие на присутствие военного представителя Армении в Арцахе с условием, что тот будет действовать при английской миссии Шуши и заниматься исключительно вопросами улучшения положения голодающих армян. Однако реально военный представитель Армении не имел рычагов воздействия на ситуацию, так как англичане попросту игнорировали любые его действия, направленные на защиту интересов армян.

В свою очередь азербайджанские войска предприняли несколько вылазок в сторону Зангезура. Пытаясь захватить армянские села, они потерпели сокрушительные поражения и отступили.

Продолжением этой политики была и попытка предоставить пастбища Зангезура азербайджанским кочевикам. Но как арцахцы, так и зангезурские армяне решительным образом выступили против таких попыток, а члены Зангезурского районного совета объявили о том, что население не позволит азербайджанским кочевникам подняться на пастбища Зангезура и что жители края готовы с оружием в руках защищать свои права и независимость.